ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2014թ. թիվ 28-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի
ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 4-րդ մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված AG 011406 անաշխատունակության թերթիկը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. հունվարի 10-ի թիվ 4-Ա որոշումը:

2. Վերացնել ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. հունվարի 10-ի թիվ 4-Ա որոշման հետևանքը՝ վերականգնելով Ա.Սավթալյանի խախտված իրավունքը՝ դպրոցի տնօրենի պաշտոնը:

3. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում ուղարկել Ա.Սավթալյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 3
ք.Վանաձոր